<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է սահմանում թույլտվածք և նստեցվածք հասկացությունները, չափերի շեղումները (վերին, ներքին և իրական),</li> <li>2) ճիշտ է որոշում բացակի ու ձգվածքի մեծությունը,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում թույլտվածքների համակարգը և սահմանում վերջինս լիսեռի ու անցքի համակարգերի բաժանման հատկանիշները,</li> <li>4) ճիշտ է թվարկում թույլտվածքների համակարգի ճշտության աստիճանները (կվալիտետները),</li> <li>5) ճիշտ է օգտվում թույլտվածքների աղյուսակներից,</li> <li>6) ճիշտ է հաշվարկում լիսեռի թույլտվածքը, անցքի թույլտվածքը և հնարավոր նվազագույն բացակը՝ ըստ տրված գծագրի կամ խնդրի պայմանի:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր թույլտվածք և նստեցվածք, չափերի շեղումներ, բացակ ու ձգվածք հասկացությունների, թույլտվածքների համակարգի ճշտության աստիճանների վերաբերյալ: Ուսանողին կտրվի մեքենայի որևէ հանգույցի գծագիր և ներկայացվող տեխնիկական պահանջները: Կհանձնարարվի հաշվարկել լիսեռի և անցքի թույլտվածքները

	<p>և հնարավոր նվազագույն բացակր:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- բացակի ու ձգվածքի մեծության որոշումը տարբեր համակարգերում,</li> <li>- թույլտվածքների համակարգի ճշտության աստիճանների որոշումը,</li> <li>- լիսեռի թույլտվածքի, անցքի թույլտվածքի և հնարավոր նվազագույն բացակի որոշումը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքերը:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, տարբեր մեքենամասեր և հանգույցներ, չափիչ և ստուգիչ գործիքների հավաքածու, դիդակտիկ նյութեր, չափորոշիչներ, մասնագիտական գրականություն, թույլտվածքների աղյուսակներ, տեխնիկական պահանջներ ներկայացնող փաստաթղթեր, հանգույցների հավաքական գծագրեր, հաշվիչ տեխնիկա, մասնագիտական գրականություն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	<p>Տիրապետել չափումների տեխնիկային՝ արդյունավետ աշխատելով հիմնական չափիչ գործիքներով</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում օգտագործվող ժամանակակից չափման միավորները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում չափման մեթոդները և դրանց իրականացման եղանակները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում ձողակարկինի կառուցվածքը և դրանով իրականացնում է հանձնարարված չափումները,</li> <li>4) ճիշտ է կիրառում միկրոմետրը և չափածողը ու ներկայացնում վերջիններիս չափելու ճշտությունը,</li> <li>5) ճիշտ է օգտվում ունիվերսալ անկյունաչափից, կալիբրներից, բացակաչափից, շաբլոններից և պարուրակաչափերից:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի չափել տրված մեքենամասերի հանձնարարվող մեծությունները, գնահատել չափման ճշտությունները:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p>

	<ul style="list-style-type: none"> <li>- ժամանակակից չափման միավորները և չափումների մեթոդիկան,</li> <li>- ձողակարկինի կառուցվածքը և դրանով չափումների իրականացման կարգը,</li> <li>- միկրոմետրի և չափածողի կառուցվածքը և դրանցով չափումների իրականացման կարգը,</li> <li>- ունիվերսալ անկյունաչափի, կալիբրների, բացակաչափի, շաբլոնների և պարուրակաչափերի կառուցվածքը և դրանցով չափումների իրականացման կարգը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական համապատասխան գրականություն, մեքենամասերի համափոխարինելիությանը վերաբերող դիտակտիկ նյութեր, թույլտվածքների և նստեցվածքների աղյուսակներ, մեքենամասեր, ձողակարկին, միկրոմետր, անկյունաչափ, կալիբրների, բացակաչափի, շաբլոններ և պարուրակաչափեր, չափիչ գործիքների տարբեր հավաքածուներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ, ՓԱԿԱՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳԱՏՄ- 4-19-002
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ անհրաժեշտ գիտելիքներ սև և գունավոր մետաղների, դրանց համաձուլվածքների, պոլիմերային և կերամիկական նյութերի տեսակների, հատկությունների, կիրառության բնագավառների վերաբերյալ, ինչպես նաև ուսանողի մոտ ձևավորել դրանց մակնշավորման և մետաղների մշակման գործնական կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	24 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

	<p>1) բացատրի թուջերի և պողպատների դասակարգումը, դրանց կիրառման բնագավառը և հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները,</p> <p>2) ներկայացնի թուջերի և պողպատների մակնշավորումը,</p> <p>3) ներկայացնի գունավոր մետաղների և դրանց համաձուլվածքների դասակարգումը, ֆիզիկաքիմիական և մեխանիկական հատկությունները, մակնշավորումը,</p> <p>4) կատարի մետաղի հատում, հարթում, ծռում, կտրում, խարտոցում,</p> <p>5) կատարի գայլիկոնում, եզրալայնում, անցքակոկում, պարուրակում, գամում,</p> <p>6) կատարի ներխարտոցում և հարմարակցում, քերանում, կիպահղկում:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p>
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<p>Բացատրել թուջերի և պողպատների դասակարգումը, դրանց կիրառման բնագավառը և հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում պողպատների և թուջերի, որպես երկաթ ածխածնային միացության, կառուցվածքային էությունը և բացատրում դրանց դասակարգումը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում պողպատների և թուջերի հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները՝ ամրություն, կարծրություն, կռելիություն, պլաստիկություն,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում պողպատների և թուջերի կիրառման բնագավառը՝ ելնելով նրանց հիմնական ֆիզիկամեխանիկական հատկություններից,</p> <p>4) ճիշտ է ճանաչում և տարբերում թուջերն ու պողպատները՝ մետաղների նմուշների կտրվածքներով,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում պողպատի և թուջի բացարձակ և համեմատական ամրությունները և կարծրությունները՝ ձեռքի փականագործական գործիքներով՝ խարտոց, սրոցաքար, հղկաքար:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր պողպատների և թուջերի կառուցվածքի, դասակարգման, դրանց ֆիզիկամեխանիկական հատկությունների և կիրառման բնագավառների վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվի</p>

	<p>տարբեր մետաղների նմուշներից ճանաչել թուջերը և պողպատները, ձեռքի փականագործական գործիքներով գնահատել պողպատի և թուջի բացարձակ ու համեմատական ամրությունները, կարծրությունները:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- պողպատների և թուջերի կառուցվածքային էությունը և դրանց դասակարգումը,</li> <li>- պողպատների և թուջերի հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները,</li> <li>- պողպատների և թուջերի կիրառման բնագավառը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ երկաթածխածնային դիագրամային ցուցապատառ, պողպատների հատկությունները բնութագրող ցուցապատառներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, տարբեր մետաղների նմուշների կոտրտվածքներ, ձեռքի փականագործական գործիքներ:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 2</b></p>	<p>Ներկայացնել թուջերի և պողպատների մակնշավորումը</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում պողպատների մակնշավորումը,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում թուջերի մակնշավորումը,</li> <li>3) ճիշտ է վերծանում պողպատների և թուջերի մակնիշները:</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողի կտրվեն հարցեր պողպատների և թուջերի մակնշավորման մեթոդիկայի վերաբերյալ, իչպես նաև կհանձնարարվի տարբեր մետաղների նմուշներից վերծանել դրանց մակնիշները:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- պողպատների մակնշավորումը,</li> <li>- թուջերի մակնշավորումը,</li> </ul>

	<p>- պողպատների և թուջերի մակնիշների վերծանումը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պողպատների և թուջերի տարբեր մակնիշների նմուշներ, ցուցապաստառներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք՝ 1 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել գունավոր մետաղների և դրանց համաձուլվածքների դասակարգումը, ֆիզիկաքիմիական և մեխանիկական հատկությունները, մակնշավորումը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում տրակտորների արտադրության և նորոգման ժամանակ առավել հաճախ օգտագործվող գունավոր մետաղների՝ ալյումինի և պղնձի համաձուլվածքները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում ալյումինի և պղնձի համաձուլվածքների դասակարգումը, դրանց մակնշավորումը,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում ալյումինի և պղնձի համաձուլվածքների ֆիզկամեխանիկական հատկությունները,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում տրակտորների արտադրության և նորոգման ժամանակ օգտագործվող պոլիմերային նյութերի դասակարգումը, մակնշավորումը, ֆիզիկաքիմիական և մեխանիկական հատկությունները,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում տրակտորների արտադրության և նորոգման ժամանակ օգտագործվող կերամիկական նյութերի դասակարգումը, մակնշավորումը, ֆիզիկաքիմիական և մեխանիկական հատկությունները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր տրակտորների արտադրության և նորոգման ժամանակ առավել հաճախ կիրառվող գունավոր մետաղների՝ ալյումինի և պղնձի համաձուլվածքների, պոլիմերային և կերամիկական նյութերի, դասակարգման, մակնշավորման և ֆիզիկամեխանիկական հատկությունների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <p>- ալյումինի և պղնձի համաձուլվածքները, դրանց դասակարգումը և մակնշավորումը,</p>

	<ul style="list-style-type: none"> <li>- այլումինի և պղնձի համաձուլվածքների ֆիզիկամեխանիկական հատկությունները,</li> <li>- տրակտորների արտադրության և նորոգման ժամանակ օգտագործվող պոլիմերային նյութերի դասակարգումը, մակնշավորումը,</li> <li>- տրակտորների արտադրության և նորոգման ժամանակ օգտագործվող պոլիմերային նյութերի ֆիզիկաքիմիական և մեխանիկական հատկությունները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պողպատների և թուջերի տարբեր մակնիշների նմուշներ, ցուցապաստառներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Կատարել մետաղի հատում, հարթում, ծռում, կտրում, խարտոցում
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է կատարում մետաղի հատում,</li> <li>2) ճիշտ է կատարում մետաղի հարթում,</li> <li>3) ճիշտ է կատարում մետաղի ծռում,</li> <li>4) ճիշտ է կատարում մետաղի կտրում,</li> <li>5) ճիշտ է կատարում մետաղի խարտոցում:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքի հիման վրա; Ուսանողին կտրվեն տարբեր տեսակի մետաղների նմուշներ և կհանձնարարվի կատարել մետաղի հարթում, ծռում, կտրում, խարտոցում:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- մետաղի հարթման հիմնական գործողությունները, անհրաժեշտ գործիքներն ու սարքավորումները,</li> <li>- մետաղի ծռման հիմնական գործողությունները, անհրաժեշտ գործիքներն ու սարքավորումները,</li> <li>- մետաղի կտրման հիմնական գործողությունները, անհրաժեշտ գործիքներն ու սարքավորումները,</li> <li>- մետաղի խարտոցման հիմնական գործողությունները, անհրաժեշտ գործիքներն ու սարքավորումները:</li> </ul>



	Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ դիդակտիկ նյութեր, մեքենամասերի նախապատրաստվածքներ և գծագրեր, ուսումնական գրականություն, փականագործական գնդան /тиски/ դազգահ, փականագործական գործիքներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք՝ 3 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Կատարել գայլիկոնում, եզրալայնում, անցքակոկում, պարուրակում, գամում
<b>Կատարման չափանիշներ</b>	1 ) ճիշտ է կատարում գայլիկոնում՝ ըստ գծանշման, կոնդուկտորի և հենակի, 2) ճիշտ է կատարում ձեռքով գայլիկոնում, 3) ճիշտ է կատարում եզրալայնում, անցքալայնում և անցքակոկում, 4) ճիշտ է կատարում ներքին և արտաքին պարուրակների մշակում, 5) ճիշտ է կատարում գամում:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն տարբեր տեսակի մետաղների նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և կատարել գայլիկոնում ըստ գծանշման, կոնդուկտորի և հենակի, ձեռքով գայլիկոնում, եզրալայնում, անցքալայնում և անցքակոկում ու գամում: Արդյունքի ծրագրային մանրամասները. - գայլիկոնում՝ ըստ գծանշման, կոնդուկտորի և հենակի, - ձեռքով գայլիկոնում, - եզրալայնում, անցքալայնում և անցքակոկում, - ներքին և արտաքին պարուրակների մշակում, - գամում: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:

<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ դիդակտիկ նյութեր, տարբեր տեսակի մետաղի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և գծագրեր, ուսումնական գրականություն, փականագործական և չափիչ գործիքներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Կատարել ներխարտոցում և հարմարակցում, քերանում, կիպահղկում
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է կատարում անցքերի ներխարտոցում,</li> <li>2) ճիշտ է կատարում մեքենամասերի հարմարադրում և հարմարակցում,</li> <li>3) ճիշտ է կատարում շինվածքի մակերևույթների քերանում,</li> <li>4) ճիշտ է կատարում կիպահղկման աշխատանքներ:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն տարբեր տեսակի մետաղի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և կհանձարարվի կատարել անցքերի ներխարտոցում, մեքենամասերի հարմարադրում և հարմարակցում, շինվածքի մակերևույթների քերանում և կիպահղկման աշխատանքներ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- անցքերի ներխարտոցման տեխնոլոգիական գործընթացները,</li> <li>- մեքենամասերի հարմարադրման և հարմարակցման տեխնոլոգիական գործընթացները,</li> <li>- շինվածքի մակերևույթների քերանման տեխնոլոգիական գործընթացները,</li> <li>- կիպահղկման տեխնոլոգիական գործընթացները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ դիդակտիկ նյութեր, տարբեր տեսակի մետաղի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և գծագրեր, ուսումնական գրականություն, փականագործական և չափիչ գործիքներ:

<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳԱՏՄ-4-19-003
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ էլեկտրատեխնիկայի հիմնական հասկացությունների, հաստատուն և փոփոխական հոսանքների էլեկտրական շղթաների, դրանցում ընթացող էլեկտրամագնիսական երևույթների վերաբերյալ, ինչպես նաև ուսանողի մոտ ձևավորել էլեկտրական և մագնիսական շղթաներ հաշվարկելու և հավաքելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) բացատրի էլեկտրական և մագնիսական դաշտերի առաջացումը և բնութագրերը, 2) ներկայացնի հաստատուն հոսանքի էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները և հաշվարկի շղթայի պարամետրերը, հավաքի շղթա, 3) ներկայացնի փոփոխական հոսանքի էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները, հաշվարկի շղթայի պարամետրերը, հավաքի շղթա:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Բացատրել էլեկտրական և մագնիսական դաշտերի առաջացումը և բնութագրերը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է բացատրում էլեկտրական դաշտի առաջացումը, 2) ճիշտ է բացատրում մագնիսական դաշտի առաջացումը, 3) ճիշտ է ներկայացնում էլեկտրական և մագնիսական դաշտերի բնութագրերը:

<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր էլեկտրական և մագնիսական դաշտերի առաջացման և բնութագրերի վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- էլեկտրական դաշտի առաջացումը,</li> <li>- մագնիսական դաշտի առաջացումը,</li> <li>- էլեկտրական և մագնիսական դաշտերի բնութագրերը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցապատառներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, էլեկտրաչափիչ գործիքներ, տրակտորի էլեկտրական համակարգերի և սարքավորումների վահանակներ, առանձին հանգույցներ, սարքեր, մոդելներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Ներկայացնել հաստատուն հոսանքի էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները և հաշվարկել շղթայի պարամետրերը, հավաքել շղթա</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում հաստատուն հոսանքի գծային էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում հաստատուն հոսանքի գծային էլեկտրական շղթայի աշխատանքային ռեժիմները,</li> <li>3) ճիշտ է հաշվում հաստատուն հոսանքի առաջադրված գծային էլեկտրական շղթայի պարամետրերը,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում հաստատուն հոսանքի ոչ գծային էլեկտրական շղթայի առանձնահատկությունները,</li> <li>5) ճիշտ է հաշվում հաստատուն հոսանքի առաջադրված ոչ գծային էլեկտրական շղթայի պարամետրերը,</li> <li>6) ճիշտ է հավաքում հաստատուն հոսանքի շղթան:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի, ըստ առաջադրանքի պահանջների, հաշվել անհրաժեշտ պարամետրերը և հավաքել հաստատուն հոսանքի էլեկտրական շղթան:</p>

	<p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- հաստատուն հոսանքի գծային էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները, աշխատանքային ռեժիմները,</li> <li>- հաստատուն հոսանքի առաջադրված գծային էլեկտրական շղթայի պարամետրերը,</li> <li>- հաստատուն հոսանքի ոչ գծային էլեկտրական շղթայի առանձնահատկությունները, դրա պարամետրերը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցապաստառներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, էլեկտրաչափիչ սարքավորումներ և գործիքներ, տրակտորի էլեկտրական համակարգերի և սարքավորումների վահանակներ, առանձին հանգույցներ, սարքեր, մոդելներ:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 3</b></p>	<p>Ներկայացնել փոփոխական հոսանքի էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները, հաշվարկել շղթայի պարամետրերը, հավաքել շղթա</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում փոփոխական հոսանքի շղթայի տարրերն ու պարամետրերը,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների հիմնական հասկացությունները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների աշխատանքային ռեժիմները,</li> <li>4) ճիշտ է հաշվում փոփոխական հոսանքի առաջադրված միաֆազ և եռաֆազ շղթաների պարամետրերը,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում ռեզոնանսային երևույթները փոփոխական հոսանքի շղթայում,</li> <li>6) ճիշտ է հավաքում փոփոխական հոսանքի շղթան:</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների հիմնական հասկացությունների, շղթայի տարրերի ու պարամետրերի, աշխատանքային ռեժիմների ռեզոնանսային երևույթների վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվի հաշվել փոփոխական հոսանքի առաջադրված միաֆազ և եռաֆազ շղթաների</p>

	<p>պարամետրերը և հավաքել փոփոխական հոսանքի շղթան:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- փոփոխական հոսանքի շղթայի տարրերն ու պարամետրերը,</li> <li>- փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների հիմնական հասկացությունները,</li> <li>- փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների աշխատանքային ռեժիմները,</li> <li>- ռեզոնանսային երևույթները փոփոխական հոսանքի շղթայում:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցապաստառներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, էլեկտրաչափիչ սարքավորումներ և գործիքներ, փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների վահանակներ, առանձին հանգույցներ, սարքեր, մոդելներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳԱՏՄ- 4-19 -004
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել, համաձայն երթևեկության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքի, ՀՀ-ում գործող ճանապարհային երթևեկության կանոնները գործնականում կիրառելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	18 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման վերաբերյալ ՀՀ օրենքում

	<p>օգտագործվող հիմնական հասկացությունները,</p> <p>2) բացատրի Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները,</p> <p>3) բացատրի ճանապարհային նշանները,</p> <p>4) բացատրի ճանապարհային գծանշանները,</p> <p>5) բացատրի տրանսպորտային միջոցի ճանաչման նշանները,</p> <p>6) բացատրի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հիմնական հոդվածները:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման վերաբերյալ ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում գործող օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում ճանապարհային երթևեկության մասնակիցների հիմնական իրավունքներն ու պարտականությունները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում տրանսպորտային միջոցների սեփականատիրոջ, վարորդի, հետիոտնի և ուղևորների հիմնական պարտականություններն ու իրավունքները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում տարբեր տրանսպորտային միջոցների դասակարգումը և դրանք վարելու իրավունքը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր գործող օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների, ճանապարհային երթևեկության մասնակիցների հիմնական իրավունքների ու պարտականությունների, ինչպես նաև տրանսպորտային միջոցների սեփականատիրոջ, վարորդի, հետիոտների և ուղևորների հիմնական պարտականությունների ու իրավունքների, տարբեր տրանսպորտային միջոցների դասակարգման և դրանք վարելու իրավունքի վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <p>- ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները,</p>

	<p>- ճանապարհային երթևեկության մասնակիցների հիմնական իրավունքներն ու պարտականությունները,</p> <p>- տրանսպորտային միջոցների սեփականատիրոջ, վարորդի, հետիոտների և ուղևորների հիմնական պարտականություններն ու իրավունքները,</p> <p>- տարբեր տրանսպորտային միջոցների դասակարգումը և դրանք վարելու իրավունքը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքը, իրավական համապատասխան ակտերը, ուսումնական համապատասխան գրականություն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 1 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 2 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Բացատրել Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների ընդհանուր դրույթները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում ՀՀ ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված լուսացույցի և կարգավորողի ազդանշանները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում վթարային ազդանշանի և «Վթարային կանգառ» ճանաչման նշանի կիրառումը,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում հատուկ ազդանշանների կիրառումը,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում երթևեկության սկիզբը և մանևրումը, տրանսպորտային միջոցների դասավորումը երթևեկելի մասում, վազանցը, երթևեկության արագությունը, կանգառը և կայանումը, հետիոտնային անցումների հատումը, երթևեկությունը երկաթուղային գծանցներով, երթևեկությունը ավտոմայրուղիներով, երթևեկությունը բնակելի գոտիներում,</li> <li>6) ճիշտ է ներկայացնում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների առավելությունը և դրանց կանգառ կետերի անցումը, արտաքին լուսային սարքերի և ձայնային ազդանշանների կիրառումը, մեխանիկական տրանսպորտային միջոցների քարշակումը, մարդկանց և բեռների փոխադրումները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր ՀՀ</p>



	<p>ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների ընդհանուր դրույթները,</li> <li>- լուսացույցի և կարգավորողի ազդանշանները,</li> <li>- վթարային ազդանշանի և «Վթարային կանգառ» ճանաչման նշանի կիրառումը,</li> <li>- հատուկ ազդանշանների կիրառումը,</li> <li>- երթևեկության սկիզբը և մանևրումը,</li> <li>- տրանսպորտային միջոցների դասավորումը երթևեկելի մասում,</li> <li>- վազանցը և երթևեկության արագությունը,</li> <li>- կանգառը և կայանումը,</li> <li>- հետիոտնային անցումների հատումը,</li> <li>- երթևեկությունը երկաթուղային գծանցներով,</li> <li>- երթևեկությունը ավտոմայրուղիներով,</li> <li>- երթևեկությունը բնակելի գոտիներում:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ճանապարհային երթևեկության կանոնները, ուսումնամեթոդական գրականություն, ցուցապաստառ, դիտակտիկ նյութեր, տեսաֆիլմեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 2 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 3</b></p>	<p>Բացատրել ճանապարհային նշանները</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում ճանապարհային նախազգուշացնող նշանները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում առավելության նշանները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում արգելող նշանները,</li> </ol>

	<p>4) ճիշտ է ներկայացնում թելադրող և հատուկ թելադրանքի նշանները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում տեղեկատվության սպասարկման և լրացուցիչ տեղեկատվության (ցուցանակներ) նշանները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր ճանապարհային նշանների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- ճանապարհային նախազգուշացնող նշանները,</li> <li>- առավելության նշանները,</li> <li>- արգելող նշանները,</li> <li>- թելադրող և հատուկ թելադրանքի նշանները,</li> <li>- տեղեկատվության սպասարկման և լրացուցիչ տեղեկատվության (ցուցանակներ) նշանները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ճանապարհային նշանների ցուցապատառների նկարներ, ճանապարհային երթևեկության կանոնները, տեսաֆիլմեր, ուսումնական համապատասխան գրականություն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 1 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 2 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Բացատրել ճանապարհային գծանշանները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում ճանապարհային հորիզոնական գծանշումները և բացատրում դրանց կիրառումը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում ճանապարհային ուղղաձիգ գծանշումները և բացատրում դրանց կիրառումը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր հորիզոնական և ուղղաձիգ գծանշումների և դրանցից օգտվելու վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- ճանապարհային հորիզոնական գծանշումները,</li> <li>- ճանապարհային ուղղաձիգ գծանշումները:</li> </ul>

	Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ճանապարհային երթևեկության կանոնները, ճանապարհային գծանշանների նկարներ, ցուցապաստառներ, տեսաֆիլմեր, ուսումնական համապատասխան գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Բացատրել տրանսպորտային միջոցի ճանաչման նշանները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում Ավտոգնացք, Երկարաչափ, Տրանսպորտային միջոց, ճանաչման նշանները և նրանց ներկայացվող պահանջները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում Արագության սահմանափակում, Դանդաղընթաց տրանսպորտային միջոց, Մեծ եզրաչափերով բեռ, Վտանգավոր բեռ, նշանները և դրանց ներկայացվող պահանջները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում երեխաների փոխադրում, Խուլ վարորդ, Ուսումնական տրանսպորտային միջոց, բժիշկ, հաշմանդամ նշանները և դրանց ներկայացվող պահանջները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր տրանսպորտային միջոցի ճանաչման նշանների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- ավտոգնացք նշան,</li> <li>- երկարաչափ տրանսպորտային միջոց նշան,</li> <li>- արագության սահմանափակում նշան,</li> <li>- դանդաղընթաց տրանսպորտային միջոց նշան,</li> <li>- մեծ եզրաչափերով բեռ նշան,</li> <li>- վտանգավոր բեռ նշան,</li> <li>- երեխաների փոխադրում նշան,</li> <li>- խուլ վարորդ նշան,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>- ուսումնական տրանսպորտային միջոց նշան,</li> <li>- բժիշկ նշան,</li> <li>- հաշմանդամ նշան:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ճանապարհային երթևեկության կանոնները, տրանսպորտային միջոցի ճանաչման նշանների նկարները և ցուցապաստառներ, տեսաֆիլմեր, ուսումնական համապատասխան գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք՝ 1 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Բացատրել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հիմնական հոդվածները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հիմնական հոդվածները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված վարչական տուգանքաչափերը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի հիմնական հոդվածների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հիմնական հոդվածները,</li> <li>- վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված վարչական տուգանքաչափերը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ճանապարհային երթևեկության կանոնները, ՀՀ-ում գործող ճանապարհային երթևեկության կանոնների իրավախախտումների հոդվածների դիսպոզիցիան:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 1 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏՐԱԿՏՈՐՆԵՐ ԵՎ ՇԱՐԺԻՉՆԵՐ»**

<b>Մոդուլի դասիչը</b>	ԳԱՏՄ-4-19-005
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել տրակտորները, ինքնագնաց շասսիները և կցանքները՝ ըստ դրանց դասակարգման տարբերակելու, տրակտորի, ինքնագնաց շասսիի և կցանքի հիմնական կառուցվածքային մասերի, ինչպես նաև շարժիչի հիմնական մասերի, մեխանիզմների և համակարգերի կառուցվածքների և աշխատանքի վերաբերյալ գիտելիքներ, ինչպես նաև դրանց տեխնիկական սպասարկումը կատարելու ու շարժիչի հնարավոր անսարքությունները արտաքին արտահայտումներով որոշելու հմտություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական աշխատանք՝ 48 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԳԱՏՄ-4-19-002 «Նյութագիտության հիմունքներ, փականագործական աշխատանքեր» և ԳԱՏՄ-4-19-003 «Էլեկտրատեխնիկայի հիմունքներ» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնել տրակտորների և ինքնագնաց շասսիների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը,</li> <li>2) ներկայացնի դիզելային շարժիչների մեխանիզմների կառուցվածքը, առանձին մասերի նշանակությունը, արտաքին արտահայտումներով որոշի հնարավոր անսարքությունները, կարգավոր ջերմային բացակը,</li> <li>3) ներկայացնի դիզելային շարժիչների հովացման համակարգի ընդհանուր կառուցվածքը, հնարավոր անսարքությունները, կատարի համակարգի տեխնիկական սպասարկում,</li> <li>4) ներկայացնի դիզելային շարժիչի յուղման համակարգի ընդհանուր կառուցվածքը, հնարավոր անսարքությունները և կատարի համակարգի տեխնիկական սպասարկում,</li> <li>5) ներկայացնի դիզելային շարժիչի սնման համակարգի ընդհանուր կառուցվածքը, հնարավոր անսարքությունները և կատարի համակարգի տեխնիկական սպասարկում,</li> <li>6) ներկայացնի դիզելային շարժիչի գործարկման համակարգի ընդհանուր կառուցվածքը, հնարավոր անսարքությունները և կատարի համակարգի տեխնիկական սպասարկում, գործարկի շարժիչը:</li> </ol>

<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել տրակտորների և ինքնագնաց շասսիների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում տրակտորների, ինքնագնաց շասսիների և կցանքների դասակարգման սկզբունքները,</p> <p>2) ճիշտ է տարբերակում տարբեր մակնիշների տրակտորները, ինքնագնաց շասսիները և կցանքները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում տրակտորների, ինքնագնաց շասսիների և կցանքների ընդհանուր կառուցվածքը, հիմնական կառուցվածքային մասերի նշանակությունը,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում տրակտորի դիզելային շարժիչների ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, աշխատանքը բնութագրող հիմնական ցուցանիշները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր ինքնագնաց շասսիների և կցանքների դասակարգման համակարգի, մակնշման սկզբունքների, ընդհանուր կառուցվածքի և հիմնական կառուցվածքային մասերի վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- ժամանակակից տրակտորների, ինքնագնաց շասսիների և կցանքների դասակարգման նշանակությունը, համակարգը և սկզբունքները,</li> <li>- ժամանակակից տրակտորների, ինքնագնաց շասսիների և կցանքների կառուցվածքային առանձնահատկությունները և հիմնական մասերի նշանակությունը,</li> <li>- տրակտորի դիզելային շարժիչների աշխատանքի սկզբունքը, կառուցվածքային առանձնահատկությունները և աշխատանքը բնութագրող հիմնական ցուցանիշները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տրակտորների և ինքնագնաց շասսիների ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ ուսումնական վահանակ, առանձին մեխանիզմների և համակարգերի ուսումնական վահանակներ, ցուցապատառներ, առանձին ագրեգատների և հանգույցների մոդելներ և նմուշներ, տարբեր մեքենամասեր, անհրաժեշտ գործիքակազմի հավաքածու, ուսումնական

	գրականություն, տեղեկատու նյութեր, տեսաֆիլմեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել դիզեյային շարժիչների մեխանիզմների կառուցվածքը, առանձին մասերի նշանակությունը, արտաքին արտահայտումներով որոշել հնարավոր անսարքությունները, կարգավորել ջերմային բացակը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում շուտովիկ շարժաթևային մեխանիզմի կառուցվածքը,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում գլանամխոցային խմբի առանձին մասերը (գլան, մխոց, մխոցաօղեր, մխոցամատ),</li> <li>3) ճիշտ է ներկայացնում շուտովիկաշարժաթևային խմբի առանձին մասերը (շարժաթև, ծնկաձև լիսեռ, թափանիվ),</li> <li>4) ճիշտ է որոշում հնարավոր անսարքությունները արտաքին արտահայտումներով և ներկայացնում վերացման եղանակները,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում գազաբաշխման մեխանիզմի նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,</li> <li>6) ճիշտ է ներկայացնում գազաբաշխման մեխանիզմի առանձին մասերը,</li> <li>7) ճիշտ է որոշում հնարավոր անսարքությունները արտաքին արտահայտումներով և ներկայացնում վերացման եղանակները,</li> <li>8) ճիշտ է կարգավորում ջերմային բացակը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր շուտովիկ շարժաթևային մեխանիզմի հիմնական մեքենամասերի և աշխատանքի վերաբերյալ: Ուսանողին կհաճնարարվի որոշել դիզեյային շարժիչի շուտովիկ շարժաթևային մեխանիզմի և գազաբաշխիչ մեխանիզմի հնարավոր ոչ բարդ անսարքությունները և վերացնել դրանք:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- շուտովիկաշարժաթևային մեխանիզմի շարժական և անշարժ մեքենամասերի կառուցվածքը և աշխատանքը,</li> <li>- գազաբաշխիչ մեխանիզմի մեքենամասերի կառուցվածքը և աշխատանքը,</li> <li>- շուտովիկաշարժաթևային մեխանիզմի հնարավոր հիմնական անսարքությունները և դրանց վերացման</li> </ul>

	<p>տեխնոլոգիական գործընթացները,</p> <p>- գազաբաշխիչ մեխանիզմի հնարավոր հիմնական անսարքությունները և դրանց վերացման տեխնոլոգիական գործընթացները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ դիզելային շարժիչի ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ ուսումնական վահանակ, առանձին մեխանիզմների և համակարգերի ուսումնական վահանակներ, ցուցապաստառներ, առանձին ագրեգատների և հանգույցների մոդելներ և նմուշներ, տարբեր մեքենամասեր, անհրաժեշտ գործիքակազմի հավաքածու, ուսումնական գրականություն, տեղեկատու նյութեր, ցուցապաստառեր, տեսաֆիլմեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Ներկայացնել դիզելային շարժիչների հովացման համակարգի ընդհանուր կառուցվածքը, հնարավոր անսարքությունները, կատարել համակարգի տեխնիկական սպասարկում</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում դիզելային շարժիչի հովացման համակարգի նշանակությունը և տեսակները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում հեղուկային հովացման համակարգի կառուցվածքը, աշխատանքը, առանձին մասերի նշանակությունը,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում օդային հովացման համակարգի կառուցվածքը, աշխատանքը, առանձին մասերի նշանակությունը,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում համակարգի հնարավոր անսարքությունները և դրանց վերացման ուղիները</li> <li>5) ճիշտ է ստուգում և կարգավորում օդամղիչ շարժաբերի փոկի ձգվածքը,</li> <li>6) ճիշտ է փոխարինում յուղը օդամաքրիչի տակնոցում,</li> <li>7) ճիշտ է ստուգում պարզ եղանակով թերմոստատի աշխատանքը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա:</p>



<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տրակտորի էլեկտրական համակարգերի և սարքավորումների վահանակներ, գեներատորային տեղակայանքների և ակումուլյատորային մարտկոցների վահանակներ կտրվածքներով, ցուցապաստառներ, սարքավորումների հիմնական խմբերի մոդելներ և նմուշներ, չափիչ-ստուգիչ գործիքների հավաքածու, ուսումնական համապատասխան գրականություն, տեսաֆիլմեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել գործարկման շարժիչի վառոցքի համակարգը, հնարավոր անսարքությունները արտաքին արտահայտումներով
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում վառոցքի համակարգի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, 2) ճիշտ է ներկայացնում մագնետի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, 3) ճիշտ է ներկայացնում էլեկտրաէներգիայի աղբյուր հանդիսացող սարքերի հնարավոր անսարքությունները արտաքին արտահայտումներով:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր գործարկման շարժիչի վառոցքի համակարգի և մագնետի կառուցվածքի ու աշխատանքի սկզբունքի վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվի որոշել էլեկտրաէներգիայի աղբյուր հանդիսացող սարքերի հնարավոր անսարքություններն արտաքին արտահայտումներով: Արդյունքի ծրագրային մանրամասները. - վառոցքի համակարգի ընդհանուր նշանակությունը, - վառոցքի համակարգի ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, - մագնետի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, - էլեկտրաէներգիայի աղբյուր հանդիսացող սարքերի նշանակությունը,

	<p>- էլեկտրաէներգիայի աղբյուր հանդիսացող սարքերի հնարավոր անսարքությունները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տրակտորի էլեկտրական համակարգերի և սարքավորումների վահանակներ, գեներատորային տեղակայանքների և ակումուլատորային մարտկոցների վահանակներ կտրվածքներով, ցուցապաստառներ, սարքավորումների հիմնական խմբերի մոդելներ և նմուշներ, չափիչ-ստուգիչ գործիքների հավաքածու, ուսումնական համապատասխան գրականություն, տեսաֆիլմեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Ներկայացնել տրակտորի էլեկտրական էներգիա սպառող սարքերի (մեկնասարք, լուսավորման, ազդանշանների և ստուգիչ-չափիչ սարքեր) նշանակությունը, աշխատանքի սկզբունքը, տեխնիկական սպասարկումը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում էլեկտրական մեկնասարքի նշանակությունը, միացման սկզբունքային սխեման, հիմնական և բաղկացուցիչ մասերը,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում մեկնասարքի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում մեկնասարքի հիմնական անսարքությունները,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում լուսավորման, ազդանշանների և ստուգիչ-չափիչ սարքերի նշանակությունը, աշխատանքի սկզբունքը,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում լապտերների միջազգային մակնիշումը,</li> <li>6) ճիշտ է ներկայացնում նախագործարկային տաքացուցիչների նշանակությունը և աշխատանքի սկզբունքը,</li> <li>7) ճիշտ է ներկայացնում էլեկտրական էներգիայի սպառող հանդիսացող սարքերի հնարավոր անսարքությունները արտաքին արտահայտումներով:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր մեկնասարքի, լուսավորման, ազդանշանների և ստուգիչ-չափիչ սարքերի</p>



	<p>նշանակության, կառուցվածքի և աշխատանքի սկզբունքի վերաբերյալ: Ուսանողին կհաճարարվի արտաքին արտահայտումներով որոշել էներգիայի սպառող հանդիսացող սարքերի անսարքությունները:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- մեկնասարքի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,</li> <li>- լուսավորման սարքերի նշանակությունը, հիմնական տեսակները, մակնշավորումը, աշխատանքի սկզբունքը,</li> <li>- ազդանշանների սարքերի նշանակությունը, հիմնական տեսակները, աշխատանքի սկզբունքը,</li> <li>- ստուգիչ-չափիչ սարքերի նշանակությունը, հիմնական տեսակները, աշխատանքի սկզբունքը,</li> <li>- էլեկտրական էներգիայի սպառող հանդիսացող սարքերի հնարավոր անսարքությունները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տրակտորի էլեկտրական համակարգերի և սարքավորումների վահանակներ, գեներատորային տեղակայանքների և ակումուլյատորային մարտկոցների վահանակներ կտրվածքներով, ցուցապաստառներ, սարքավորումների հիմնական խմբերի մոդելներ և նմուշներ, չափիչ-ստուգիչ գործիքների հավաքածու, ուսումնական համապատասխան գրականություն, տեսաֆիլմեր:</p>
<b>Ուսուցման ժամաքանակը</b>	<p><b>երաշխավորված</b></p> <p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏՐԱԿՏՈՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳԱՏՄ-4-19-009
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել տրակտոր վարելու գործնական հմտություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	<p>36 ժամ, որից՝</p> <p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 30 ժամ</p>
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԳԱՏՄ-4-19-004 «Ճանապարհային

	երթևեկության կանոններ», ԳԱՏՄ-4-19-005 «Տրակտորներ և շարժիչներ», ԳԱՏՄ-4-19-006 «Տրակտորի շասսի, կառավարման համակարգեր» և ԳԱՏՄ-4-19-007 «Տրակտորի աշխատանքային սարքավորումներ» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի տրակտորի խցիկում տեղակայված կառավարման օրգանների և սարքերի վահանակի վրա տեղադրված ցուցիչների նշանակությունը, 2) գործարկի շարժիչը, 3) վարի տրակտորը ուղիղով, շրջադարձերով, վերելքներով և վայրէջքներով, 4) վարի տրակտորը դժվար ճանապարհային պայմաններում և համեմատաբար բարձր արագություններով, 5) վարի տրակտորը հետընթացքով, անցումը դարբասով, մանևրումը սահմանափակ անցատեղերով, 6) վարի տրակտորը երթևեկության տարբեր ինտենսիվությամբ երթուղիներով:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել տրակտորի խցիկում տեղակայված կառավարման օրգանների և սարքերի վահանակի վրա տեղադրված ցուցիչների նշանակությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում կառավարման օրգանների նշանակությունը, 2) ճիշտ է ներկայացնում սարքերի վահանակի վրա տեղադրված ցուցիչների նշանակությունը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կառավարման օրգանների և սարքերի վահանակի վրա տեղադրված ցուցիչների նշանակության վերաբերյալ: Արդյունքի ծրագրային մանրամասները. - տրակտորի կառավարման օրգանների նշանակությունը, - սարքերի վահանակի վրա տեղադրված ցուցիչների նշանակությունը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնավարժական տրակտոր, վարժասարքեր, համակարգիչներ անհրաժեշտ ծրագրային փաթեթներով,

	տրակտորի կառավարման օրգանների ուսումնական վահանակ, մասնագիտական գրականություն, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Գործարկել շարժիչը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է գործարկում գործարկման շարժիչը, 2) ճիշտ է գործարկում դիզելային շարժիչը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատում իրականացվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կհանձարարվի գործարկել գործարկման շարժիչը և դիզելային շարժիչը: Արդյունքի ծրագրային մանրամասները. - գործարկման շարժիչի աշխատանքի և գործարկման առանձնահատկությունները, - դիզելային շարժիչի գործարկումը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնավարժական տրակտոր, վարժասարքեր, համակարգիչներ անհրաժեշտ ծրագրային փաթեթներով, շարժիչի գործարկման վահանակ, մասնագիտական գրականություն, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Վարել տրակտորը ուղիղով, շրջադարձերով, վերելքներով և վայրէջքներով
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է տեղից շարժում տրակտորը՝ մինչև շարժման սահուն սկիզբը, 2) ճիշտ է վարում է տրակտորը ուղիղով, աջ և ձախ շրջադարձերով, 3) ճիշտ է վարում է տրակտորը վերելքներով, 4) ճիշտ է վարում է տրակտորը վայրէջքներով:

<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի աստիճանաբար սահուն տեղից շարժել տրակտորը՝ մինչև շարժման սահուն սկիզբը, վարել տրակտորը ուղղագիծ, ապա աջ և ձախ շրջադարձերով:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- տրակտորը տեղից շարժելը, շարժման սահունության ապահովելը,</li> <li>- տրակտորի վարումը ուղիղով, աջ և ձախ շրջադարձերով:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի և երթևեկության անվտանգության կանոնները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնավարժական տրակտոր, վարժասարքեր, համակարգիչներ անհրաժեշտ ծրագրային փաթեթներով, ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ դիտակտիկ նյութեր, մասնագիտական գրականություն, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 4</b></p>	<p>Վարել տրակտորը դժվար ճանապարհային պայմաններում և համեմատաբար բարձր արագություններով</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է վարում տրակտորը ճանապարհային և շահագործման տարբեր պայմաններում,</li> <li>2) ճիշտ է վարում տրակտորը համեմատաբար բարձր արագություններով,</li> <li>3) վարում է տրակտորը գիշերվա ժամերին:</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի վարել տրակտորը ճանապարհային և շահագործման տարբեր պայմաններում, համեմատաբար բարձր արագություններով և գիշերվա ժամերին:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- տրակտորի վարումը ճանապարհային և շահագործման տարբեր պայմաններում,</li> <li>- տրակտորի վարումը համեմատաբար բարձր արագություններով,</li> </ul>

	<p>- տրակտորի վարումը գիշերվա ժամերին:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի և երթևեկության անվտանգության կանոնները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնավարժական տրակտոր, վարժասարքեր, համակարգիչներ անհրաժեշտ ծրագրային փաթեթներով, ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ դիտակտիկ նյութեր, մասնագիտական գրականություն, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 1 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	<p>Վարել տրակտորը հետընթացքով, անցումը դարբասով, մանևրումը սահմանափակ անցատեղերով</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է տեղից շարժում տրակտորը հետընթացքով՝ մինչև ընթացքի սահունությունը, մոտեցնում հետընթացքով կախովի կամ կցովի մեքենային,</p> <p>2) ճիշտ է անցնում պայմանական դարբասով առաջընթացքով և հետընթացքով,</p> <p>3) վարում է տրակտորը տարբեր գյուղատնտեսական մեքենաների հետ ագրեգատավորված:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի վարել տրակտորը տարբեր պայմաններում:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- տրակտորի վարումը հետընթացքով՝ մինչև ընթացքի սահունությունը,</li> <li>- հետընթացքով տրակտորի մոտեցումը կախովի կամ կցովի մեքենային,</li> <li>- ագրեգատի կազմումը,</li> <li>- տրակտորի վարումը պայմանական դարբասով առաջընթացքով և հետընթացքով,</li> <li>- տրակտորի վարումը տարբեր գյուղատնտեսական մեքենաների հետ՝ ագրեգատավորված:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի և երթևեկության անվտանգության կանոնները:</p>

<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնավարժական տրակտոր, վարժասարքեր, համակարգիչներ անհրաժեշտ ծրագրային փաթեթներով, ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ դիտակտիկ նյութեր, մասնագիտական գրականություն, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:
<b>Ռիսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ռիսումնառության արդյունք 6</b>	Վարել տրակտորը երթևեկության տարբեր ինտենսիվությամբ երթուղիներով
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է տրակտորով դուրս գալիս երթևեկության գոտի,</li> <li>2) ճիշտ է անցնում երկաթուղային գծանցի հատումը,</li> <li>3) ճիշտ է շարժվում տրանսպորտային հոսքում,</li> <li>4) ճիշտ է անցնում տարբեր խաչմերուկներ,</li> <li>5) ճիշտ է որոշում մոտեցող տրանսպորտային միջոցի արագությունը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ռիսանողին կհանձնարարվի վարել տրակտորը տարբեր ինտենսիվությամբ երթուղիներով:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- տրակտորով երթևեկության գոտի դուրս գալը,</li> <li>- երկաթուղային գծանցի հատում, անցում,</li> <li>- անցում տարբեր խաչմերուկներով,</li> <li>- շարժում տրանսպորտային տարբեր ինտենսիվության հոսքերում:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի և երթևեկության անվտանգության կանոնները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնավարժական տրակտոր, վարժասարքեր, համակարգիչներ անհրաժեշտ ծրագրային փաթեթներով, ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ դիտակտիկ նյութեր, մասնագիտական գրականություն,

	անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳԱՏՄ-4-19-010
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ հողի կազմի և հատկությունների, հողի մշակման համակարգերի, պարարտանյութերի տեսակների, ցանքաշրջանառությունների, երկրագործության հիմնական համակարգերի մասին, ինչպես նաև ուսանողի մոտ ձևավորել գյուղատնտեսական մշակաբույսերը ճանաչելու, հողի մեխանիկական կազմը գնահատելու, ցանքսի և պարարտացման նորմերը գնահատելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	24 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի հողի ֆիզիկաքիմիական հատկությունները և մեխանիկական կազմը, 2) ներկայացնի գյուղատնտեսական մշակաբույսերի աճի պայմանները և երկրագործության մեջ դրանց կանոնավորման մեթոդները, 3) դասակարգի մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել հողի ֆիզիկաքիմիական հատկությունները և մեխանիկական կազմը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է գնահատում հողի կազմը, 2) ճիշտ է ներկայացնում հողի հատկությունները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա:

	<p>Ուսանողին կտրվեն հարցեր հողի ֆիզիկական հատկությունների, կազմի և տիպերի վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվի որոշել հողի ֆիզիկական հատկությունները և մեխանիկական կազմը:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- հողի ֆիզիկական հատկությունները,</li> <li>- հողի մեխանիկական կազմը և դրա ազդեցությունը բույսերի աճի և հողի հատկությունների վրա,</li> <li>- հողի բերրիությունը և դրա տեսակները,</li> <li>- հողի տիպերը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հողի ֆիզիկաքիմիական հատկությունների և մեխանիկական կազմի վերաբերյալ մասնագիտական գրականություն, ցուցապաստառներ, տեղեկատու նյութեր, հողի տարբեր նմուշներ, տեսաֆիլմեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 2</b></p>	<p>Ներկայացնել գյուղատնտեսական մշակաբույսերի աճի պայմանները և երկրագործության մեջ դրանց կանոնավորման մեթոդները</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>1) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մշակաբույսերի աճի պայմանները, 2) ճիշտ է ներկայացնում երկրագործության մեջ դրանց կանոնավորման մեթոդները:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր մշակաբույսերի կյանքի փուլերի և անհրաժեշտ պայմանների վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվի որոշել կոնկրետ առաջարկված մշակաբույսերի կյանքի փուլերը և կիրառել նրանց կանոնավորման մեթոդները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- մշակաբույսերի կյանքի փուլերը և անհրաժեշտ պայմանները,</li> </ul>



	<p>- երկրագործության մեջ դրանց կանոնավորման մեթոդները,</p> <p>- մշակաբույսերի կյանքի պայմանները բարելավող ագրոտեխնիկան, մելիորատիվ և այլ միջոցառումներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գյուղատնտեսական մշակաբույսերի վերաբերյալ մասնագիտական գրականություն, ցուցապատառներ, տեղեկատու նյութեր, մշակաբույսերի տարբեր նմուշներ, տեսաֆիլմեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Դասակարգել մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է դասակարգում մոլախոտերը,</li> <li>2) ճանաչում է մոլախոտերը արտաքին տեսքով,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա:</p> <p>Ուսանողին կտրվեն հարցեր մոլախոտերի խմբերի, մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և դրանց դեմ պայքարի միջոցառումների վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվի ընտրել արտաքին տեսքով առաջադրված մոլախոտերը և կիրառել մոլախոտերի, մշակաբույսերի հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի միջոցառումներ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- մոլախոտերի դասակարգումը խմբերի, դրանց արտաքին տեսքը և բնութագրերը,</li> <li>- գյուղատնտեսական բույսերի բերքատվության նվազումը մոլախոտային բուսականության հետևանքով,</li> <li>- մոլախոտերի դեմ պայքարի ագրոտեխնիկական, կենսաբանական, քիմիական և նախազգուշական եղանակները,</li> <li>- մշակաբույսերի հիվանդությունները, արտաքին տեսքը,</li> <li>- մշակաբույսերի վնասատուները, դրանց արտաքին տեսքը,</li> </ul>

	- մոլախոտերի, մշակաբույսերի հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի միջոցառումները: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մոլախոտերի ֆիզիկաքիմիական հատկությունների, մեխանիկական կազմի և մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումների վերաբերյալ մասնագիտական գրականություն, ցուցապաստառներ, տեղեկատու նյութեր, մոլախոտերի տարբեր նմուշներ, տեսաֆիլմեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳԱՏՄ-4-19-011
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ գյուղատնտեսական մեքենաների ընդհանուր կառուցվածքի, դրանց առանձին հանգույցների, մեխանիզմների կառուցվածքների և աշխատանքի սկզբունքի վերաբերյալ գիտելիքներ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական աշխատանք՝ 48 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԳԱՏՄ-4-19-002 «Նյութագիտության հիմունքներ, փականագործական աշխատանքներ» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի հողամշակման մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը, 2) ներկայացնի ցանիչ և տնկիչ մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը, 3) ներկայացնի պարարտացման մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային

	<p>հիմնական մասերի նշանակությունը,</p> <p>4) ներկայացնի բույսերի քիմիական պաշտպանության մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը,</p> <p>5) ներկայացնի բերքահավաքի և կերերի կուտակման մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել հողամշակման մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում հողի մեխանիկական մշակման եղանակները և հողամշակման մեքենաների դասակարգումը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում գութանի ընդհանուր կառուցվածքը, առանձին մասերի (իրան, խոփ, թև, դաշտային տախտակ, նախագութանիկ, հողխորացուցիչ, դանակ, անիվներ) նշանակությունը և տեսակները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում հողի մակերեսային մշակման մեքենաների նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը և աշխատանքը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր հողի մշակման եղանակների, հողամշակման մեքենաների դասակարգման, գութանի ընդհանուր կառուցվածքի, հողի փխրիչների ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել աշխատանքի կախովի գութանը կամ հողի փխրիչը և կատարել համապատասխան կարգավորումները՝ օգտագործելով անհրաժեշտ գործիքներ և սարքեր:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- հողի մեխանիկական մշակման եղանակները և դրանց համեմատական վերլուծությունը,</li> <li>- հողի մեխանիկական մշակման մեքենաների դասակարգման և մակնիշման համակարգը,</li> <li>- գութանի ընդհանուր կառուցվածքը, հիմնական մեքենամասերի կառուցվածքը և դրանց համալիր աշխատանքը,</li> </ul>

	<p>- հողի մակերեսային մշակման մեքենաների նշանակությունը, դասակարգումը և կառուցվածքային առանձնահատկություններն ու կիրառման ոլորտները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում տրված հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հողամշակման տարբեր մեքենաների ընդհանուր կառուցվածքի ուսումնական վահանակներ, տարբեր ագրեգատների և հանգույցների մոդելներ և ցուցապաստառներ, անհրաժեշտ գործիքակազմի հավաքածու, ուսումնական համապատասխան գրականություն, տեսաֆիլմեր, տեղեկատու նյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Ներկայացնել ցանիչ և տնկիչ մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում ցանիչ մեքենաների դասակարգումը և մակնշումը,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում համակցված շարքացանի ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում շարքացանի առանձին հանգույցների նշանակությունը և կառուցվածքը</li> <li>4) ճիշտ է ներկայացնում կարտոֆիլատնկիչ մեքենայի կառուցվածքը,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում սածիլատնկիչ մեքենայի կառուցվածքը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ցանիչ և տնկիչ մեքենաների նշանակության, դասակարգման, ընդհանուր կառուցվածքի և աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- ցանիչ մեքենաների նշանակությունը և դասակարգումը,</li> <li>- համակցված շարքացանի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը,</li> <li>- շարքացանի առանձին հանգույցների նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>- եգիպտացորենի ցանքի մեքենայի նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը,</li> <li>- ճակնդեղացան մեքենայի նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը,</li> <li>- տնկիչ մեքենայի նշանակությունը և դասակարգումը,</li> <li>- տնկիչ մեքենայի կառուցվածքային առանձնահատկությունները,</li> <li>- կարտոֆիլատնկիչ մեքենայի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը,</li> <li>- սածիլատնկիչ մեքենայի նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը և աշխատանքը,</li> <li>- եգիպտացորենի ցանքի մեքենայի նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցանիչ և տնկիչ մեքենաների տարբեր տեսակների ընդհանուր կառուցվածքի ուսումնական վահանակներ, տարբեր ագրեգատների և հանգույցների մոդելներ և ցուցապաստառներ, անհրաժեշտ գործիքակազմի հավաքածու, ուսումնական համապատասխան գրականություն, տեսաֆիլմեր, տեղեկատու նյութեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 3</b></p>	<p>Ներկայացնել պարարտացման մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում պարարտացման մեքենաների դասակարգումը և մակնշումը,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում հանքային պարարտանյութերի ցրիչների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում օրգանական պարարտանյութերի ցրիչների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում հողի մեջ հեղուկ և պինդ պարարտանյութեր մատուցող մեքենաների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը:</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր հողի օրգանական և հանքային պարարտացման պարարտանյութացրիչ մեքենաների, պինդ և հեղուկ պարարտանյութեր մտցնող մեքենաների նշանակության և ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ:</p>

	<p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- օրգանական պարարտացման մեքենայի ընդհանուր կառուցվածքը,</li> <li>- պարարտացման մեքենայի աշխատանքային (բանոդ) օրգանների ընդհանուր կառուցվածքը,</li> <li>- հանքային պարարտացման մեքենայի ընդհանուր կառուցվածքը ,</li> <li>- հանքային պարարտացման մեքենայի հիմնական հանգույցների ընդհանուր կառուցվածքը,</li> <li>- ցանիչ ապարատի ընդհանուր կառուցվածքը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պարարտացման մեքենաների ընդհանուր կառուցվածքի ուսումնական վահանակներ, տարբեր ագրեգատների և հանգույցների մոդելներ և ցուցապաստառներ, անհրաժեշտ գործիքակազմի հավաքածու, ուսումնական համապատասխան գրականություն, տեսաֆիլմեր, տեղեկատու նյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Ներկայացնել բույսերի քիմիական պաշտպանության մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում տրակտորային սրսկիչների նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, 2) ճիշտ է ներկայացնում փոշոտիչների նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի հիմա վրա: Ուսանողին կտրվեն հարցեր գյուղատնտեսական մշակաբույսերի քիմիական պաշտպանության մեքենաների նշանակության, դասակարգման, մակնիշումի, ընդհանուր կառուցվածքի և աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- մշակաբույսերի քիմիական պաշտպանության մեքենաների նշանակությունը, հիմնական տեսակները և դասակարգումը (սրսկիչներ, փոշոտիչներ և աերոզոլային գեներատորներ),</li> <li>- տրակտորային և շալակի սրսկիչների նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>- կուլտիվատորի սրսկիչի ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը,</li> <li>- աեորոգուլային գեներատորի ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը,</li> <li>- փոշոտիչների նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բույսերի քիմիական պաշտպանության մեքենաների ընդհանուր կառուցվածքի ուսումնական վահանակներ, տարբեր ագրեգատների և հանգույցների մոդելներ և ցուցապաստառներ, անհրաժեշտ գործիքակազմի հավաքածու, ուսումնական համապատասխան գրականություն, տեսաֆիլմեր, տեղեկատու նյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ  գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	<p>Ներկայացնել բերքահավաքի և կերերի կուտակման մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում հնձիչ մեքենաների դասակարգումը և մակնշումը,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում հնձիչ մեքենաների առանձին հանգույցների նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում քարշակների նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում հավաքիչ-բարդոցիչների նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում մամլիչ-հավաքիչների նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր բերքահավաքի և կերերի կուտակման մեքենաների դասակարգման, մակնիշման, ընդհանուր կառուցվածքի, կառուցվածքային հիմնական մասերի նշանակության և աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- հնձիչ մեքենաների դասակարգումը և մակնշումը,</li> <li>- հնձիչ մեքենաների ընդհանուր կառուցվածքը,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>- սեզմենտավոր դանակով խոտհնձիչների ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը,</li> <li>- ռոտացիոն (սկավառակավոր, ճկուն տարրերով) խոտհնձիչների ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը,</li> <li>- խոտի փոցխերի նշանակությունը, դասակարգումը, կառուցվածքային առանձնահատկությունները և աշխատանքի սկզբունքը.</li> <li>- խոտի հավաքիչ մամլիչների՝ այդ թվում գլանափաթեթային մամլիչների ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը,</li> <li>- սիլոսահավաք մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բերքահավաքի և կերերի կուտակման մեքենաների ընդհանուր կառուցվածքի ուսումնական վահանակներ, տարբեր ագրեգատների և հանգույցների մոդելներ և ցուցապաստառներ, անհրաժեշտ գործիքակազմի հավաքածու, ուսումնական համապատասխան գրականություն, տեսաֆիլմեր, տեղեկատու նյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳԱՏՄ-4-19-012
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ մեքենատրակտորային ագրեգատների (ՄՏԱ) ռացիոնալ համալրման, ագրեգատի կազմի ճշտման վերաբերյալ, ինչպես նաև ուսաողի մոտ ձևավորել ՄՏԱ-ի արդյունավետ շահագործման կարողություններ:</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	<p>72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական աշխատանք՝ 48 ժամ</p>
<b>Մուտքային պահանջները</b>	<p>Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԳԱՏՄ-4-19-010 «Երկրագործության և հողագիտության հիմունքներ» և ԳԱՏՄ-4-19-011 «Գյուղատնտեսական մեքենաներ» մոդուլները:</p>



<p><b>Ուսումնառության արդյունքները</b></p>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնի գյուղատնտեսական մեքենաների համակարգը և մեքենայացման ու ավտոմատացման տեխնիկական միջոցները,</li> <li>2) նախապատրաստի մեքենատրակտորային ագրեգատը հողի նախացանքային աշխատանքների համար և կատարի անհրաժեշտ աշխատանքներ,</li> <li>3) նախապատրաստի մեքենատրակտորային ագրեգատը հողի պարարտացման աշխատանքների համար և կատարի այդ աշխատանքները,</li> <li>4) նախապատրաստի մեքենատրակտորային ագրեգատը մշակաբույսերի քիմիական պաշտպանության աշխատանքների համար և կատարի այդ աշխատանքները,</li> <li>5) նախապատրաստի մեքենատրակտորային ագրեգատը մշակաբույսերի ցանքի և տնկման աշխատանքների համար և կատարի այդ աշխատանքները,</li> <li>6) ներկայացնի մեքենաների պահպանման եղանակները և իրականացնի պահպանման գործընթացները:</li> </ol>
<p><b>Մոդուլի գնահատման կարգը</b></p>	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 1</b></p>	<p>Ներկայացնել գյուղատնտեսական մեքենաների համակարգը և մեքենայացման ու ավտոմատացման տեխնիկական միջոցները</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում մեր երկրի տարածքի գոտիականությունը և ՄՏԱ-ի օգտագործման առանձնահատկությունները կոնկրետ պայմաններում,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական գործընթացների հիմնական խմբերը. հողի մշակում, ցանք, տնկում և պարարտացում, գյուղատնտեսական մշակաբույսերի խնամք, մշակաբույսերի բերքահավաք,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում օպերացիոն տեխնոլոգիական քարտերը:</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր մեր երկրի տարածքի գոտիականության, գյուղատնտեսական մեքենաների համակարգի և մեքենայացման ու ավտոմատացման տեխնիկական միջոցների, կոնկրետ պայմաններում ՄՏԱ-ի օգտագործման</p>

	<p>առանձնահատկությունների, տեխնոլոգիական գործընթացների հիմնական խմբերի վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ծրագրային մարամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- գյուղատնտեսական գործընթացների դասակարգումը,</li> <li>- մեքենայացման ու ավտոմատացման տեխնիկական միջոցները,</li> <li>- հողի մշակման տեխնոլոգիական գործընթացները,</li> <li>- ցանքի տեխնոլոգիական գործընթացները,</li> <li>- տնկման և պարարտացման տեխնոլոգիական գործընթացները,</li> <li>- գյուղատնտեսական մշակաբույսերի խնամքի տեխնոլոգիական գործընթացները,</li> <li>- մշակաբույսերի բերքահավաքի տեխնոլոգիական գործընթացները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գյուղատնտեսական մեքենաների համակարգի և մեքենայացման ու ավտոմատացման տեխնիկական միջոցների ընդհանուր կառուցվածքի ուսումնական վահանակներ, տարբեր ագրեգատների և հանգույցների մոդելներ ու ցուցապաստառներ, անհրաժեշտ գործիքակազմի հավաքածու, համապատասխան գրականություն, տեսաֆիլմեր, մեր երկրի տարածքի գոտիականության վերաբերյալ տեղեկատու նյութեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 2</b></p>	<p>Նախապատրաստել մեքենատրակտորային ագրեգատը հողի նախացանքային աշխատանքների համար և կատարել անհրաժեշտ աշխատանքներ</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում վարի նշանակությունը, ագրոտեխնիկական պահանջները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում վարի ՄՏԱ-ի կազմը,</li> <li>3) ճիշտ է նախապատրաստում ՄՏԱ-ն աշխատանքի համար,</li> <li>4) ճիշտ է կատարում աշխատանքը, պահպանելով անվտանգության կանոնները,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում համատարած կուլտիվացիայի նշանակությունը, ագրոտեխնիկական պահանջները,</li> </ol>

	<p>6) ճիշտ է ներկայացնում ՄՏԱ-ի կազմը,</p> <p>7) ճիշտ է նախապատրաստում ՄՏԱ-ն աշխատանքի համար,</p> <p>8) ճիշտ է կատարում աշխատանքը՝ պահպանելով անվտանգության կանոնները:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր հողի մշակման եղանակների, հողի հիմնական և նախացանքային մշակման գործընթացների, ագրոտեխնիկական պահանջների, ՄՏԱ-ի կազմի վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվի ընտրել համապատասխան ագրեգատներ և ներկայացնել մշակման գործընթացները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- հողի հիմնական մշակման գործընթացների ընտրությունը՝ կախված կլիմայական պայմաններից, հողի տիպից, մեխանիկական կազմից, ֆիզիկաքիմիական և կենսաբանական հատկություններից, դաշտերի մոլախոտավածության աստիճանից և մոլախոտերի կենսաբանական կազմից,</li> <li>- հողի նախացանքային մշակման գործընթացները,</li> <li>- հողի մշակման եղանակները (վար, երեսվար, կուլտիվացում, փոցխում, քարշակում, գլանակում, հարթեցում և այլն),</li> <li>- հողի նախացանքային մշակման գործընթացների նշանակությունն ու կիրառման նպատակը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հողի նախացանքային աշխատանքների վերաբերյալ մասնագիտական գրականություն, մեքենատրակտորային ագրեգատի նախապատրաստման և ընդհանուր կառուցվածքի ուսումնական վահանակ, տարբեր ագրեգատների և հանգույցների մոդելներ և ցուցապաստառներ, անհրաժեշտ գործիքակազմի հավաքածու, համապատասխան գրականություն, տեսաֆիլմեր, տեղեկատու նյութեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 3</b></p>	<p>Նախապատրաստել մեքենատրակտորային ագրեգատը հողի պարարտացման աշխատանքների համար և կատարել</p>

	այդ աշխատանքները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում հողի պարարտացման նշանակությունը, ագրոտեխնիկական պահանջները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում օրգանական պարարտանյութերի մատուցման ՄՏԱ-ի կազմը,</p> <p>3) ճիշտ է նախապատրաստում ՄՏԱ-ն աշխատանքի համար,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում հանքային պարատանյութերի մատուցման ՄՏԱ-ի կազմը,</p> <p>5) ճիշտ է նախապատրաստում ՄՏԱ-ն աշխատանքի համար,</p> <p>7) ճիշտ է կատարում աշխատանքը՝ պահպանելով անվտանգության կանոնները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի միջոցով:</p> <p>Ուսանողին կտրվեն հարցեր հողի պարարտացման նշանակության, հանքային և օրգանական պարարտանյութերի տեսակների, հողի պարարտացման ագրոտեխնիկական պահանջների և ՄՏԱ –ի կազմի վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվի ընտրել հանքային պարարտանյութերի մատուցման ՄՏԱ-ի կազմը և նախապատրաստել ՄՏԱ-ն աշխատանքի համար:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- հանքային պարարտանյութերի դասակարգումը (ազոտական, ֆոսֆորական, կալիումական միկրոպարարտանյութեր),</li> <li>- հանքային պարարտանյութերով հողը պարարտացնելու ձևերն ու եղանակները,</li> <li>- հանքային պարարտանյութերի մատուցման ՄՏԱ-ի կազմը,</li> <li>- ՄՏԱ-ի նախապարտաստումը հանքային պարարտանյութերի մատուցման համար,</li> <li>- հողի պարարտացման աշխատանքների կատարման գործընթացները,</li> <li>- օրգանական պարարտանյութերի դասակարգումը,</li> <li>- օրգանական պարարտանյութերով հողը պարարտացնելու ձևերն ու եղանակները,</li> <li>- անվտանգության տեխնիկայի կանոնները հողի պարարտացման աշխատանքների ժամանակ:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:</p>

<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հողի պարարտացման աշխատանքների վերաբերյալ մասնագիտական գրականություն, մեքենատրակտորային ագրեգատի նախապատրաստման և ընդհանուր կառուցվածքի ուսումնական վահանակ, տարբեր ագրեգատների և հանգույցների մոդելներ ու ցուցապաստառներ, անհրաժեշտ գործիքակազմի հավաքածու, համապատասխան գրականություն, տեսաֆիլմեր, տեղեկատու նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Նախապատրաստել մեքենատրակտորային ագրեգատը մշակաբույսերի քիմիական պաշտպանության աշխատանքների համար և կատարել այդ աշխատանքները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում հողի մշակաբույսերի քիմիական պաշտպանության նշանակությունը, ագրոտեխնիկական պահանջները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում ՄՏԱ-ի կազմը,</li> <li>3) ճիշտ է նախապատրաստում ՄՏԱ-ն աշխատանքի համար,</li> <li>4) ճիշտ է կատարում աշխատանքը՝ պահպանելով անվտանգության կանոնները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր գյուղատնտեսական մշակաբույսերի քիմիական պաշտպանության մեքենաների նշանակության, դասակարգման, ընդհանուր կառուցվածքի և աշխատանքի վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվի առաջադրված մշակաբույսերի քիմիական պաշտպանության համար ընտրել ՄՏԱ-ի կազմը և նախապատրաստել ՄՏԱ-ն աշխատանքի համար:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- մշակաբույսերի քիմիական պաշտպանության մեքենաների նշանակությունը, հիմնական տեսակները և դասակարգումը (սրսկիչներ, փոշոտիչներ և աերոզոլային գեներատորներ),</li> <li>- տրակտորային սրսկիչների նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը,</li> <li>- աերոզոլային գեներատորի ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը,</li> </ul>

	<p>- փոշոտիչների նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մշակաբույսերի քիմիական պաշտպանության աշխատանքների վերաբերյալ մասնագիտական գրականություն, մեքենատրակտորային ագրեգատի նախապատրաստման և ընդհանուր կառուցվածքի ուսումնական վահանակ, տարբեր ագրեգատների և հանգույցների մոդելներ և ցուցապաստառներ, անհրաժեշտ գործիքակազմի հավաքածու, համապատասխան գրականություն, տեսաֆիլմեր, տեղեկատու նյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	<p>Նախապատրաստել մեքենատրակտորային ագրեգատը մշակաբույսերի ցանքի և տնկման աշխատանքների համար և կատարել այդ աշխատանքները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում հացահատիկային մշակաբույսերի ցանքին ներկայացվող ագրոտեխնիկական պահանջները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում ՄՏԱ-ի կազմը,</li> <li>3) ճիշտ է նախապատրաստում ՄՏԱ-ն աշխատանքի համար,</li> <li>4) ճիշտ է կատարում աշխատանքը՝ պահպանելով անվտանգության կանոնները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա:</p> <p>Ուսանողին կտրվեն հարցեր հացահատիկային մշակաբույսերի ցանքին ներկայացվող ագրոտեխնիկական պահանջների, ցանիչ մեքենաների նշանակության, դասակարգման, ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ:</p> <p>Ուսանողին կհանձնարարվի առաջադրված հացահատիկային մշակաբույսերի ցանքի համար ընտրել ՄՏԱ-ի կազմը և նախապատրաստել աշխատանքի ՄՏԱ-ն:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- հացահատիկային մշակաբույսերի ցանքին ներկայացվող ագրոտեխնիկական պահանջները,</li> <li>- ցանիչ մեքենաների նշանակությունը, դասակարգումը և կառուցվածքային առանձնահատկությունները,</li> </ul>

	<p>- համակցված շարքացանի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը,</p> <p>- խորության, ցանքի նորմայի միջշարային տարածությունների կարգավորումները,</p> <p>- շարքացանի առանձին հանգույցների նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մշակաբույսերի քիմիական պաշտպանության աշխատանքների վերաբերյալ մասնագիտական գրականություն, մեքենատրակտորային ագրեգատի նախապատրաստման և ընդհանուր կառուցվածքի ուսումնական վահանակ, տարբեր ագրեգատների և հանգույցների մոդելներ ու ցուցապաստառներ, անհրաժեշտ գործիքակազմի հավաքածու, համապատասխան գրականություն, տեսաֆիլմեր, տեղեկատու նյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	<p>Ներկայացնել մեքենաների պահպանման եղանակները և իրականացնել պահպանման գործընթացները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է շարադրում տեխնիկայի պահպանման դրոյթները և հրահանգները,</li> <li>2) ճիշտ է շարադրում բաց, փակ և կոմբինացված պահպանման եղանակների առանձնահատկությունները,</li> <li>3) ճիշտ է ընտրում պահպանման ժամանակ խնամքի և տեխնիկական սպասարկման միջոցները և կատարում տեխնիկական սպասարկում,</li> <li>4) ճիշտ է կիրառում պահպանման ժամանակ հակահրդեհային միջոցառումները և համապատասխան միջոցները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր մեքենաների պահպանման նշանակության, եղանակների, պահպանման տեխնոլոգիաների և գործընթացների վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվի առաջադրված մեքենայի համար ընտրել պահպանման ժամանակ խնամքի և տեխնիկական սպասարկման միջոցները և կատարել տեխնիկական սպասարկում:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p>

	<ul style="list-style-type: none"> <li>- մեքենաների պահպանման դրույթները և հրահանգները,</li> <li>- բաց, փակ և կոմբինացված պահպանման եղանակների առանձնահատկությունները,</li> <li>- պահպանման ժամանակ խնամքի և տեխնիկական սպասարկման միջոցները և տեխնիկական սպասարկումը,</li> <li>- մեքենաների պահպանման ժամանակ հակահրդեհային միջոցառումները և համապատասխան միջոցները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեքենաների պահպանման եղանակների վերաբերյալ մասնագիտական գրականություն, ցուցապաստառներ, անվտանգության տեխնիկայի և հրդեհային անվտանգության վերաբերյալ հրահանգներ, տեսաֆիլմեր, տեղեկատու նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԵՌՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԲԵՌՆՈՒՄ ԲԵՌՆԱԹԱՓՈՒՄ, ՏԵՂԱՓՈԽՈՒՄ, ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳԱՏՄ-4-19-013
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ կցասայլակով տրակտորի՝ որպես տրանսպորտային միջոցի դերի, բեռների տեսակի, նրանց քանակի և չափերի, բեռնման և բեռնաթափման ձևերի ու միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ուսանողի մոտ ձևավորել բեռների և արտադրանքի պահեստավորման վերաբերյալ կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	18 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԳԱՏՄ-4-19-006 «Տրակտորի շասսի, կառավարման համակարգեր» և ԳԱՏՄ-4-19-011 «Գյուղատնտեսական մեքենաներ» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝



	<p>1) ներկայացնի տրակտորային տրանսպորտային միջոցների տեսակները, մակնշումը, դրանց կառուցվածքը և հնարավորությունները,</p> <p>2) ներկայացնի բեռնման ու բեռնաթափման միջոցների տեսակները և կառուցվածքը,</p> <p>3) ներկայացնի բեռների տեսակները, դրանց բեռնման, տեղափոխման և բեռնաթափման անվտանգության կանոնները:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել տրակտորային տրանսպորտային միջոցների տեսակները, մակնշումը, դրանց կառուցվածքը և հնարավորությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում տրակտորային տրանսպորտային միջոցների տեսակները, մակնշումը, կառուցվածքը, տեխնիկական ցուցանիշները և նշանակությունը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում տրանսպորտային միջոցների շահագործման ցուցանիշները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր տրակտորային տրանսպորտային միջոցների, ինչպես նաև բեռների և բեռնման ու բեռնաթափման միջոցների տեսակների, մակնշման, ընդհանուր կառուցվածքի, տեխնիկական և շահագործական ցուցանիշների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- տրակտորային տրանսպորտային միջոցների դասակարգումը և հիմնական տեսակները,</li> <li>- տրակտորային տրանսպորտային միջոցների մակնշումը,</li> <li>- տրակտորային տրանսպորտային միջոցների ընդհանուր կառուցվածքը,</li> <li>- տրակտորային տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հիմնական ցուցանիշները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տրակտորային տրանսպորտային միջոցների, ինչպես նաև բեռների և բեռնման ու բեռնաթափման միջոցների տարբեր տեսակների վերաբերյալ մասնագիտական գրականություն, ցուցապաստառներ, տեխնիկական

	բնութագրերի վերաբերյալ տեղեկատու նյութեր, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել բեռնման ու բեռնաթափման միջոցների տեսակները և կառուցվածքը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում բեռնման և բեռնաթափման միջոցների տեսակները, դրանց կառուցվածքը, տեխնիկական ցուցանիշները, 2) ճիշտ է որոշում բեռնման և բեռնաթափման միջոցների շահագործման ցուցանիշները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումը իրականացվում է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր բեռնման և բեռնաթափման միջոցների տեսակների, դասակարգման, մակնշման, ընդհանուր կառուցվածքի, տեխնիկական և շահագործական ցուցանիշների վերաբերյալ: Արդյունքի ծրագրային մանրամասները. - բեռնման և բեռնաթափման միջոցների նշանակությունը, տեսակները և դասակարգումը, - - բեռնման և բեռնաթափման միջոցների մակնշումը և կիրառման ոլորտները, -բեռնման և բեռնաթափման միջոցների ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի առանձնահատկությունները, - բեռնման և բեռնաթափման միջոցների տեխնիկական շահագործման հիմնական ցուցանիշները: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բեռների տեսակների, բեռնման և բեռնաթափման տարբեր միջոցների վերաբերյալ մասնագիտական գրականություն, ցուցապաստառներ, դրանց տեխնիկական բնութագրերի վերաբերյալ տեղեկատու նյութեր, տեսաֆիլմեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել բեռների տեսակները, դրանց բեռնման, տեղափոխման և բեռնաթափման անվտանգության կանոնները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է դասակարգում բեռների տեսակները, դրանց հատկությունները և որոշում հնարավոր գաբարիդային

	<p>չափերի սահմանային արժեքները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում բեռների տեղափոխման առանձնահատկությունները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում բեռնման և բեռնաթափման առանձնահատկությունները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում բեռների բեռնման, բեռնաթափման և տեղափոխման անվտանգության կանոնները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր բեռների տեսակների, դրանց բեռնման, տեղափոխման և բեռնաթափման, անվտանգության կանոնների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- բեռների դասակարգումը, հատկությունները,</li> <li>- սորուն բեռների տեղափոխման, բեռնման և բեռնաթափման առանձնահատկությունները,</li> <li>- կոշտ հատային բեռների տեղափոխման, բեռնման և բեռնաթափման առանձնահատկությունները,</li> <li>- հեղուկ և փոշենման բեռների տեղափոխման, բեռնման և բեռնաթափման առանձնահատկությունները,</li> <li>- շուտ փչացող բեռների տեղափոխման, բեռնման և բեռնաթափման առանձնահատկությունները,</li> <li>- բեռների բեռնման, տեղափոխման և բեռնաթափման, անվտանգության կանոնները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բեռների տեսակների, դրանց բեռնման, տեղափոխման և բեռնաթափման վերաբերյալ անվտանգության տեխնիկայի կանոնները, մասնագիտական գրականություն, ցուցապաստառներ, բեռների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ տեղեկատու նյութեր, տեսաֆիլմեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p><b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏՐԱՎՏՈՐՆԵՐԻ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ»</b></p>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳԱՏՄ-4-19-014
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների

	տեխնիկական սպասարկման վերաբերյալ գիտելիքներ, ինչպես նաև ուսանողի մոտ ձևավորել տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	24 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԳԱՏՄ-4-19-005 «Տրակտորներ և շարժիչներ», ԳԱՏՄ-4-19-006 «Տրակտորի շասսի, կառավարման համակարգեր», ԳԱՏՄ-4-19-007 «Տրակտորի աշխատանքային սարքավորումներ», ԳԱՏՄ-4-19-008 «Տրակտորի էլեկտրասարքավորումներ», ԳԱՏՄ-4-19-011 «Գյուղատնտեսական մեքենաներ» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ու սարքավորումների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման գործընթացները, 2) կատարի տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքներ:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ու սարքավորումների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման գործընթացները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկման գործընթացները, 2) ճիշտ է ներկայացնում տեխնիկական սպասարկումների դերը և նշանակությունը, 3) ճիշտ է ներկայացնում տեխնիկական սպասարկման տեսակները, դրանց կատարման ժամկետները և պարբերականությունը, 4) ճիշտ է ներկայացնում տեխնիկական սպասարկման առավել բարդ գործողությունները,

<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ու սարքավորումների տեխնիկական սպասարկման նշանակության, ամենօրյա, 1-ին, 2-րդ, 3-րդ կամ միջսեզոնային տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ժամկետների և պարբերականությունների, անվտանգության կանոնների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկման նշանակությունը դրանց հուսալի, անխափան և անվտանգ շահագործման համար,</li> <li>- տեխնիկական սպասարկման ժամկետները՝ ամենօրյա, 1-ին, 2-րդ, 3-րդ կամ միջսեզոնային տեխնիկական սպասարկում,</li> <li>- ամենօրյա, 1-ին, 2-րդ, 3-րդ կամ միջսեզոնային տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման տեխնոլոգիական գործընթացները և օգտագործվող տեխնիկական միջոցները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման վերաբերյալ մասնագիտական գրականություն և տեղեկատու նյութեր, տեխնիկական սպասարկման համար անհրաժեշտ գործիքներ, սարքավորումներ և նյութեր, տեսաֆիլմեր:</p>
<p><b>Ուսուցման ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 2</b></p>	<p>Կատարել տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքներ</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>1) ճիշտ է կատարում տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների տեխնիկական սպասարկման աշխատանքները՝ ամենօրյա, 1-ին, 2-րդ, 3-րդ և միջսեզոնային տեխնիկական սպասարկումներ ու ընթացիկ նորոգում,</p> <p>2) ճիշտ է կիրառում սպասարկման տեխնիկական անվտանգության միջոցները:</p>

<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի նորմավորված ժամանակահատվածում կատարել առաջադրված տրակտորի կամ գյուղատնտեսական մեքենայի 1-ին, 2-րդ, 3-րդ կամ միջսեզոնային տեխնիկական սպասարկման աշխատանքներ, առաջադրված համակարգի, ագրեգատի կամ մեխանիզմի ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ կիրառելով տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման տարբեր տեխնիկական միջոցներ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- տրակտորի 1-ին, 2-րդ, 3-րդ կամ միջսեզոնային տեխնիկական սպասարկման աշխատանքները,</li> <li>- գյուղատնտեսական մեքենաների 1-ին, 2-րդ, 3-րդ կամ միջսեզոնային տեխնիկական սպասարկման աշխատանքները,</li> <li>-տեխնիկական սպասարկման աշխատանքների իրականացման տեխնիկական միջոցները, կատարման տեխնոլոգիական սարքավորումները և սարքերը,</li> <li>- անվտանգության տեխնիկայի կանոնները տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ժամանակ,</li> <li>- տեխնիկական անվտանգության անհրաժեշտ միջոցները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկման ու ընթացիկ նորոգման վերաբերյալ մասնագիտական գրականություն և տեղեկատու նյութեր, տեխնիկական սպասարկման համար անհրաժեշտ գործիքներ, սարքավորումներ ու նյութեր, ուսումնական սարքավորումներ և վահանակներ, տեխնիկական սպասարկման ու ընթացիկ նորոգման տեխնոլոգիական գործընթացների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմ, տեսաֆիլմեր:</p>
<p><b>Ուսուցման ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
<p><b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ»</b></p>	

<b>Մոդուլի դասիչը</b>	ԳԱՏՄ-4-19-015
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել բիզնես գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գործնական հմտություններ: Դրանք ներառում են ինքնուրույն բիզնես կազմակերպելու և վարելու համար անհրաժեշտ գործողությունների իրականացման հմտություններ, որոնցում հաշվի է առնված ինչպես գործարար ոլորտին հատուկ սկզբունքները, այնպես էլ բիզնես գործունեությունը կարգավորող իրավական դաշտի առանձնահատկությունները
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 22 ժամ գործնական աշխատանք՝ 50 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլի 1 և 2 ուսումնառության արդյունքներն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ: Մյուս ուսումնառության արդյունքների ուսումնասիրությունը նպատակահարմար է իրականացնել որոշակի մասնագիտական մոդուլներ յուրացնելուց հետո, որպեսզի դրանց գործնական ձեռքբերումները օգտագործվեն համապատասխան ծրագրեր մշակելու համար:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը, 2) ներկայացնի կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը, 3) կատարի շուկայի հետազոտման և գնահատման գործողություններ, 4) բնութագրի կազմակերպության ռեսուրսները և գնահատի օգտագործման արդյունավետությունը, 5) կատարել ծախսերի հաշվարկ, ձևավորի ապրանքի /ծառայության/ գինը, 6) մշակի բիզնես պլան և գործողությունների ծրագիր, հաշվի հարկեր, տուրքեր, կազմի ֆինանսական հաշվետվություններ:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) բիզնես-գործունեության էությունը ճիշտ է մեկնաբանում,

	<p>2) բիզնես-գործունեության տեսլականը, նպատակը և ռազմավարությունը ճիշտ է սահմանում,</p> <p>3) բիզնես-գործունեության համար նախընտրելի անձնային հատկանիշների կարևորությունը հիմնավորում է,</p> <p>4) բիզնես-գործունեության համար սեփական հնարավորությունների գնահատումը ճիշտ է,</p> <p>5) բիզնես-գաղափարի էությունը ճիշտ է մեկնաբանում,</p> <p>6) բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացի բաղադրիչների իմաստը ճիշտ է մեկնաբանում,</p> <p>7) ըստ իրավիճակների հիմնավորում է ձևավորված բիզնես-գաղափարները,</p> <p>բիզնես-գաղափարի տարբերակի գնահատումը ճիշտ է:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների և անհատական գործնական առաջադրանքների հիման վրա: Քննարկումների ընթացքում բացահայտվում է բիզնես-գաղափարի և բիզնես-գործունեության հիմնական հասկացությունների վերաբերյալ ուսանողների յուրացրած գիտելիքների մակարդակը, իսկ գործնական հանձնարարությունների միջոցով նրանք ըստ իրավիճակի ներկայացնում և հիմնավորում են կոնկրետ բիզնես-գաղափար, որոշակիացնում են իրենց նախընտրած գործունեության տեսակը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Բիզնես-գաղափարը որպես բիզնես-գործունեության մեկնակետ, դրա ձևավորման նախադրյալները: Բիզնես-գաղափարի իրատեսությունը հիմնավորող ցուցիչները: Օրենսդրական դաշտի պահանջները հաշվի առնելու կարևորությունը: Գործարար միջավայրի օբյեկտիվ գնահատման կարևորությունը և մոտեցումները: Սեփական գործարար հնարավորությունների բացահայտումը և անաչառության կարևորությունը: Բիզնես-գործունեության համար նախընտրելի ոլորտի ընտրությունը: Տեսլականի, նպատակի և ռազմավարության հստակ և հիմնավորված ձևակերպումը: Վերջնական բիզնես-գաղափարի գնահատումը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե քննարկումների ընթացքում ուսանողը ցուցաբերում է հիմնավորված եզրահանգումներ անելու ունակություն, իսկ գործնական առաջադրանքների ընթացքում ներկայացնում է տվյալ իրավիճակում առավել նախընտրելի ու հիմնավորված լուծումներ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքների անհրաժեշտ փուլերում անհրաժեշտ է կիրառել մտագրոհի տեխնիկան՝ հետագա քննարկման ուղղությունները</p>



	<p>ձևավորելու համար:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ֆլիպչարտ, գունավոր թղթեր, ամրակներ, տարբեր գույնի մարկերներ, ուսուցողական իրավիճակների նկարագրեր, բիզնես-գաղափարների հաջողված օրինակներ, տեսլականի, նպատակի և ռազմավարության ուսուցողական ձևակերպումներ՝ նաև ոչ հստակ ձևակերպված:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) կազմակերպության կազմակերպչա-իրավական ձևերի բնութագիրը ճիշտ է,</li> <li>2) կազմակերպության աշխատանքը կարգավորող իրավական ակտերի պահանջների ընկալումը ճիշտ է,</li> <li>3) կազմակերպության ստեղծման քայլերի հաջողականությունը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>4) կազմակերպության ստեղծման համար պահանջվող փաստաթղթերի ձևավորումը ճիշտ է,</li> <li>5) կազմակերպության կառավարման անհրաժեշտությունը և խնդիրները ճիշտ է մեկնաբանում,</li> <li>6) կառավարման ֆունկցիաների բնութագրերը ճիշտ է,</li> <li>7) կառավարման ոճերի բնութագրերը ճիշտ է,</li> <li>8) կառավարման ֆունկցիոնալ բաժինների ձևավորման մոտեցումները ճիշտ է,</li> <li>9) աշխատատեղերի ձևավորման և պարտականությունների բաշխման մոտեցումները հիմնավոր է,</li> <li>10) աշխատողների ընտրության կարգը հիմնավոր է,</li> <li>11) կազմակերպության կառավարմանն առընչվող փաստաթղթերի ձևավորումը ամբողջական և հիմնավոր է,</li> <li>12) կնքվելիք պայմանագրերի կազմը և բովանդակությունը իրավաբանորեն ճիշտ է,</li> </ol> <p>կառավարման արդյունավետության գնահատման մոտեցումները հիմնավոր է:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարականների հիման վրա: Թեստերի միջոցով ստուգվում է տարբեր կազմակերպչա-իրավական ձև ունեցող կազմակերպությունների, դրանց կառավարման առանձնահատկությունների վերաբերյալ ուսանողի գիտելիքները, իսկ գործնական հանձնարարությունների միջոցով ուսանողը պետք է տրված պայմաններին համապատասխան կազմի տարբեր

	<p>փաստաթղթեր: Գործնական հանձնարարությունները նպատակահարմար է առաջադրել ըստ ուսուցման փուլերի: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Կազմակերպության հասկացությունը և բնութագիրը: Կազմակերպությունների տիպերը, դրանց բնութագրիչ առանձնահատկությունները: Կազմակերպությունների ստեղծման ու գրանցման կարգը: Գործընթացի օրենսդրական կարգավորումը: Կազմակերպության կանոնադրությունը: Կազմակերպության կառավարման խնդիրները, ֆունկցիաները: Կառավարման ոճերը, դրանց առանձնահատուկ գծերը: Կառավարման ապարատի կառուցվածքը, ստորաբաժանումները: Կառավարման բաժինների առանձնացման սկզբունքները: Աշխատանքի բաժանման անհրաժեշտությունը, աշխատատեղերի ձևավորման մոտեցումները տարբեր մեծության կազմակերպություններում: Կազմակերպության փաստաթղթային տնտեսության ընդհանուր բնութագիրը, փաստաթղթերի ձևավորման կարգը: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե թեստային առաջադրանքները կատարվում է հիմնականում ճիշտ, ոչ էական թերություններով, իսկ գործնական առաջադրանքները տրված պայմաններին համապատասխան կատարվում է ճիշտ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է կիրառել առանձին իրավիճակների խմբային քննարկումներ:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական ու ցուցադրական նյութեր, տարբեր փաստաթղթերի նմուշներ, առանձին կազմակերպություններում աշխատանքի բաժանման, աշխատողների ֆունկցիաների սահմանման օրինակներ:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 3</b></p>	<p>Կատարել շուկայի հետազոտման և գնահատման գործողություններ</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է մեկնաբանում &lt;&lt;շուկա&gt;&gt; հասկացությունը,</li> <li>2) շուկայի հետազոտման անհրաժեշտությունը հիմնավորում է,</li> <li>3) շուկայի հետազոտման հիմնական ուղղությունները բացահայտում է,</li> <li>4) շուկայի հետազոտման գործընթացի փուլերը ճիշտ է բնութագրում,</li> <li>5) ըստ փուլերի շուկայի հետազոտման մեթոդների ընտրությունը հիմնավոր է,</li> </ol>

	<p>6) շուկայական պահանջարկի ծավալի բացահայտման մոտեցումները ճիշտ է,</p> <p>7) շուկայի վրա ազդող գործոնների և գնորդի վարքագծի գնահատումը ճիշտ է,</p> <p>8) շուկայական մրցակցության գնահատումը հիմնավոր է,</p> <p>9) շուկայի հատվածավորումը իրատեսական է,</p> <p>10) մարքեթինգի գաղափարների /4P և 7P/ նշանակությունը ճիշտ է բացահայտում,</p> <p>մարքեթինգային ռազմավարության մշակման մոտեցումները հիմնավորված է:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է թեստային առաջադրանքների, խմբային քննարկումների և գործնական հանձնարարությունների հիման վրա: Թեստերի միջոցով ստուգվելու է շուկայի վերաբերյալ հիմնական հասկացությունների ճիշտ ընկալման ուսանողի կարողությունը, իսկ գործնական առաջադրանքների միջոցով նա կատարելու է իրավիճակին համապատասխան եզրահանգումներ /հնարավորության դեպքում կարող են օգտագործվել նաև ուսանողների ինքնուրույն դիտարկումների ու հետազոտությունների արդյունքները/: Արդյունքները անհրաժեշտ է քննարկել խմբում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Շուկայի բնութագիրը: Շուկայի հետազոտության անհրաժեշտությունը և հիմնական ուղղությունները: Շուկայի հետազոտության գործընթացը: Շուկայական պահանջարկի գնահատումը: Շուկայի վրա ազդող գործոնները, գնորդի վարքագիծը: Մրցակցություն, դրա գնահատումը: Շուկայի հատվածավորումը: Մարքեթինգի 4 և 7 P-երը: Մարքեթինգային ռազմավարության էությունը և մշակման կարևորությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը թեստային և գործնական առաջադրանքները ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում, իսկ խմբային քննարկումների ընթացքում ցուցաբերում է իրավիճակին հիմնավորված արձագանքելու ունակություններ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ամբողջ ուսուցման ընթացքում ըստ իրավիճակների անհրաժեշտ է կիրառել մտագրոհի տեխնիկան:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, շուկայական իրավիճակների նկարագրեր, տիպական իրավիճակներում առավել հիմնավորված լուծումների օրինակներ, գործնական կիրառություն ունեցող փաստաթղթերի նմուշներ:</p>

<b>Ուսուցման ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Բնութագրել կազմակերպության ռեսուրսները և գնահատել օգտագործման արդյունավետությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) կազմակերպության ռեսուրսների կազմը և կառուցվածքը ճիշտ է բացահայտում,</li> <li>2) կազմակերպության ռեսուրսների խմբերի միջև օպտիմալ հարաբերակցության ապահովման անհրաժեշտությունը հիմնավորում է,</li> <li>3) նյութական ռեսուրսների խմբերի տնտեսագիտական բնութագրերը ճիշտ է,</li> <li>4) աշխատանքային ռեսուրսների բնութագիրը և դրանց առընչվող ցուցանիշների մեկնաբանությունը ճիշտ է,</li> <li>5) աշխատանքի տեխնիկական նորմավորման էությունը ճիշտ է բացատրում, նորմաների մեծության ձևավորման մեխանիզմը ճիշտ է ներկայացնում,</li> <li>6) ֆինանսական ռեսուրսների հետ կապված հասկացությունների բացատրությունը ճիշտ է,</li> <li>7) ֆինանսական ռեսուրսների համալրման աղբյուրների առանձնահատկությունները ճիշտ է մեկնաբանում,</li> <li>8) ռեսուրսների պահանջվելիք մեծության հաշվարկման մոտեցումները հիմնավոր է,</li> <li>9) հիմնական կապիտալի առանձին խմբերի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</li> <li>10) շրջանառու կապիտալի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</li> <li>11) աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</li> </ol> <p>ռեսուրսների օգտագործման վերաբերյալ պարզ վերլուծական գործողությունները և ըստ արդյունքների եզրահանգումները հիմնավոր է:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների և գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ ռեսուրսների տարբեր խմբերի հաշվել առավել ընդհանուր նշանակություն ունեցող ցուցանիշները: Նպատակահարմար է գործնական առաջադրանքները հանձնարարել փուլերով՝ ըստ</p>

	<p>ռեսուրսների խմբերի: Քննարկումների ընթացքում նրանք ոչ միայն գնահատելու են ստացված արդյունքները, այլ նաև առաջարկելու են լուծումների սեփական տարբերակները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Կազմակերպության ռեսուրսների ընդհանուր բնութագիրը: Նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսներ, դրանց կազմը: Հիմնական կապիտալ և շրջանառու կապիտալ: Ֆինանսական ռեսուրսներ: Ռեսուրսների մեծությունը բնութագրող ցուցանիշները: Ռեսուրսների օգտագործման մակարդակը բնութագրող ցուցանիշները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքները մեթոդապես ճիշտ են կատարվում:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, գործնական հանձնարարությունների փաթեթներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	<p>Կատարել ծախսերի հաշվարկ, ձևավորել ապրանքի /ծառայության/ գինը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) &lt;&lt;ծախս&gt;&gt; հասկացության բովանդակությունը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>2) տարբերակում է ծախսերի խմբերը,</li> <li>3) ծախսերը հիմնավորող փաստաթղթերի տեսակները և վավերապայմանները ճիշտ է ներկայացնում,</li> <li>4) ծախսերի տարբեր խմբերի հաշվապահական ձևակերպումները ճիշտ է,</li> <li>5) ապրանքների տարբեր տեսակների և ծառայությունների տարբեր խմբերի համար պահանջվող ծախսերի կազմը հիմնավոր է ներկայացնում,</li> <li>6) ապրանքի կամ ծառայության ինքնարժեքի մեջ ներառվող ծախսերի հոդվածները ճիշտ է ներկայացնում,</li> <li>7) ինքնարժեքի տարբեր հոդվածների մեծության հաշվարկման մեթոդաբանությունը ճիշտ է կիրառում,</li> <li>8) հաշվում է ապրանքի կամ ծառայության միավորի ինքնարժեքը,</li> <li>9) ինքնարժեքի իջեցման հնարավորությունները ճիշտ է գնահատում,</li> <li>10) ինքնարժեք-շուկայական գին մարժայի տարբերության հիմնավորումը ճիշտ է, անհատական գնից շուկայական գնի անցման տրամաբանությունը բացատրում է:</li> </ol>

<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առաջադրանքի հիման վրա: Ռիսանոլներին հանձնարարվելու է ըստ ծախսերի առանձին հոդվածների կատարել միավոր արտադրանքի կամ ծառայության համար դրանց հաշվարկներ և որոշել ինքնարժեքն ու գինը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերի հասկացությունը: Ուղղակի և անուղղակի ծախսեր, կայուն և փոփոխական ծախսեր: Ծախսերի մեծության հաշվարկման մեթոդաբանությունը: Ծախսերի հաշվապահական ձևակերպման կարգը: Անալիտիկ և սինթետիկ հաշվառման կազմակերպումը: Միավորի ինքնարժեքի ծախսային հոդվածները: Ինքնարժեքի հաշվարկը: Շահույթի նորմայի հասկացությունը և կիրառումը: Արտադրանքի գնի մեծության հաշվարկը: Անհատական գնից շուկայական գնին անցման գործընթացը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե հաշվարկները կատարվում է ճիշտ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, գործնական հանձնարարությունների փաթեթներ, հաշվարկների կատարման ընթացքում օգտագործվող օրինակելի ձևաթղթեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 6</b></p>	<p>Մշակել բիզնես պլան և գործողությունների ծրագիր</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) բիզնես գործունեության համար բիզնես պլանի անհրաժեշտությունը հիմնավորում է,</li> <li>2) բիզնես պլանի բաժինների բովանդակության մեկնաբանությունները ճիշտ է,</li> <li>3) բիզնես պլանի մշակման համար անհրաժեշտ ելակետային տվյալների կազմը և ձեռք բերման աղբյուրները ճիշտ է ներկայացնում,</li> <li>4) ճիշտ է կատարում SWOT վերլուծություն,</li> <li>5) SWOT վերլուծության արդյունքները կիրառում է բիզնես պլանը մշակելու գործընթացում,</li> <li>6) բիզնես պլանով նախատեսվող միջոցառումները հիմնավորված է,</li> <li>7) բիզնես պլանի կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը, ժամանակացույցը հիմնավոր է,</li> </ol>

	<p>8) բիզնես պլանի կատարումն ապահովող ռեսուրսների մեծությունները ճիշտ է սահմանվել, բիզնես պլանով նախատեսված միջոցառումների իրականացման ռիսկերը և դրանց հաղթահարման քայլերը հիմնավոր են:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է կազմված բիզնես պլանի հիման վրա, որում պետք է արտացոլված լինեն նախատեսված բիզնես գործունեության վերաբերյալ բոլոր հայտնի տեղեկությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Բիզնես պլանի բովանդակությունը և բաժիններում ներառվող հարցերը: Բիզնես պլանի կազմման համար անհրաժեշտ ելակետային տվյալները, դրանց աղբյուրները: SWOT վերլուծության արդյունքների կիրառումը պլանը կազմելու ժամանակ: Բիզնես պլանի կատարման գործողությունների ծրագիրը, դրա կազմման մոտեցումները: Գործողությունների ժամանակացույցը: Պլանի կատարման հնարավոր ռիսկերը, դրանց հաղթահարման միջոցառումները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե պլանը կազմված է ճիշտ և հիմնավորված:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բիզնես պլանի բովանդակությանը համապատասխան ձևաթղթեր, մեթոդական հանձնարարականներ, պլանը կազմելու համար օգտագործվող ելակետային տվյալներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 7</b>	<p>Հաշվել հարկեր, տուրքեր, կազմել ֆինանսական հաշվետվություններ</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) հարկային օրենսդրության հիմնական դրույթները ճիշտ է մեկնաբանում,</li> <li>2) հարկային օրենսդրության հիմնական հասկացությունները ճիշտ է բացատրում,</li> <li>3) հարկերի և տուրքերի մեծությունը հաշվելու համար կիրառվող ելակետային ցուցանիշների հաշվարկը ճիշտ է կատարում,</li> <li>4) հարկերի և տուրքերի մեծությունը ճիշտ է հաշվարկում,</li> <li>5) հարկերի վճարման ժամկետների գնահատումը համապատասխանում է օրենսդրության պահանջներին,</li> </ol>

	<p>6) ֆինանսական հաշվետվությունների կազմը ճիշտ է ներկայացնում,</p> <p>7) անհրաժեշտ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ է լրացնում,</p> <p>8) ստուգումների իրականացման իրավական ակտերի պահանջները ճիշտ է բացատրում, ստուգումների հետ կապված տնտեսվարողի իրավունքներն ու պարտականությունները ճիշտ է ներկայացնում:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առջադրանքների կատարման հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է հաշվել հարկերի և տուրքերի գումարները, լրացնել ֆինանսական հաշվետվություններ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի և տուրքերի տեսակները, դրանց տնտեսական նշանակությունը: Հարկային օրենսդրության հիմնական դրույթները: Հարկերի հաշվարկման կարգը և դրույքաչափերը: Հարկատուների պատասխանատվությունը հարկային օրենսդրության պահանջների պահպանման համար: Ֆինանսական հաշվետվությունների տեսակները, հաշվետվությունների լրացման և ներկայացման կարգը: Ստուգումների անցկացումը, կարգը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները ճիշտ է կատարում:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, հարկերի վերաբերյալ օրենքներ և նորմատիվ փաստաթղթեր, մեթոդական նյութեր, հաշվետվությունների ձևաթղթեր, հաշվարկները կատարելու համար օգտագործվող ելակետային նյութերի փաթեթներ:</p>
<p><b>Ուսուցման Ժամաքանակը</b></p> <p><b>Երաշխավորված</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>